ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"16" Նոյեմբերի 2004թ. N 428

ք.Ստեփանակերտ

ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳԵՐԽՈՆԱՎ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ո ւ մ է.

Հաստատել ջրհավաք ավազաններում և գերխոնավ տարածքներում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունների հսկողության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004 թ Նոյեմբերի 16-ի
թիվ 428 որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳԵՐԽՈՆԱՎ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

1.Սույն կարգով սահմանվում են ջրհավաք ավազաններում և գերխոնավ տարածքներում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունների հսկողություն իրականացնող իրավասու մարմինները, և կանոնակարգվում է դրանց գործունեությունը:

2.Ջրհավաք ավազաններում և գերխոնավ տարածքներում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունների օրենքով սահմանված կարգով և դեպքերում հսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի Հանարապետության գյուղատնտեսության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների վարչությունը, տարածքային կառավարման և տարեկան ինքնակառավարման մարմինները իրենց իրավասությունների սահմաններում:

3.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը կազմակերպում է ջրհավաք ավազաններում և գերխոնավ տարածքներում սանիտարահամաճարակային չափորոշիչների, սանիտարական նորմերի, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ ու հակահամաճարակային միջոցառումներ:

Եթե հետազոտությունների ընթացքում պարզվել է, որ գերազանցվել են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը 24 ժամվա ընթացքում համապատասխան տվյալներ է տրամադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների վարչությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը, իր համապատասխան ստորաբաժանումներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարությանը այդ իրավիճակների համար համապատասխան կազմակերպչական և օրենքով սահմանված կարգով ու դեպքերում հսկողական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

4.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ իրականացնում է տարածաշրջանային կարևորություն ունեցող ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների գյուղատնտեսական նշանակության հողատեսքերն աղակալումից, ալկալիացումից, ճահճացումից, աղտոտումից և էրոզիայից պահպանելու նկատմամբ հսկողություն, ոռոգման, դրենաժային և գրունտային ջրերի քիմիական հետազոտություններ՝ դրանք ոռոգման նպատակով օգտագործելու պիտանիության, հողատեսքերում աղակալում ու ալկալիացում առաջացնելու վտանգավորության պարզաբանման նպատակով և յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ մինչև հաջորդ ամսվա 15-ը, իրականացված գործունեության մասին, օրենքով սահմանված կարգով և դեպքերում, ամփոփ հաշվետվություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն:

5.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների վարչությունն իրականացնում է բնական աղետների փլուզումների, հեղեղումների, երկրաշարժերի, էկոլոգիական աղետների, երաշտի վտանգի գնահատման ու կանխատեսման նկատմամբ հսկողություն և արդյունքները ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն:

6.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրականացնում է հսկողություն ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) որակական ու քանակական ցուցանիշների, հողի ծածկոցման գոտիների, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց աճելավայրերի, հատուկ պահպանվող տարածքների ջրային ռեսուրսների վրա բնական և մարդածին գործոնների ազդեցության գնահատման նկատմամբ, ինչպես նաև համակարգում և ամփոփում է իր և շահագրգիռ մարմինների կողմից ստացված տվյալները Ջրի ազգային ծրագրում ընդգրկելու, ինչպես նաև ռազմավարության հետագա փուլերի մշակման և հետագա հսկողություն իրականացնելու համար:

ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Ս. Գրիգորյան